

ՆՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Պ. ՊՐՕՅԵՍՈՐ ՊԱՐՐՈՏԻ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԸ ԻՍԿԱՊԷՍ ԲԱՐՁՐԱ-

ՆԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ:



Քաղաքական խորհրդական Պարրոտի Արարատի գազաթը անմիջապէս բարձրանալուց յետոյ կասկած յարուցին Տիխիսում և նոյն իսկ Նախիջևանում, այդ այնքան ծանր և հռչակաւոր ձեռնարկութեան գլուխ գալու հէմ,—որ ինչպէս յայտնի է առաջինն էր իր տեսակում: Այդ կասկածը ծագել էր մասամբ պղտոր աղբիւրից, մասամբ այնքան աննշան էր, որ հռչակաւոր գիտնականը հազիւ նրա վրայ մի առանձին ուշադրութիւն դարձրեց: Բայց երբ մինչև անգամ մի յարգելի ձայն Տիխիսի լրագրի այդ կասկածը կրկնեց և պէտք էր երկնչել, որ այդ յօդուածը գուցէ անցնի մայրաքաղաքի թերթերը և այստեղից արտասահման անցնէր, այն ժամանակ Պարրոտը այլևս չէր կարող լռել: Այդ պատճառով նա կարծեց որ իր դէմ բարձրացրած այդ յարձակումը ամենահիմնաւոր կերպով կը ջրէր, եթէ այն 4 անձինքը, որ Արարատ բարձրանալիս իրան ընկերակցել էին և դեռ Տրիխիսում էին դատաստանի միջոցով խոստովանեցնէր և նրանց խոստովանութեան արձանագրութիւնը իր ճանապարհորդութեան նկարագրութեան յառաջաբանում, որ անցեալ տարի Բեռլինում լոյս տեսաւ, իրան արդարացնելու համար հրառարակէր: Սակայն այս վկայականն էլ առանց ընդդիմախօսութեան չմնաց և մանաւանդ քիչ առաջ Գէօտենգեան գիտնական յայտարարութեանց մէջ երևացող, Պարրոտի գիրքը քննող հեղինակը աշխատում է, հիմնուելով, որ լսուած վկաների երկուսի վկայութիւնը իսկա-

պէս Արարատի ամենաբարձր գագաթը բարձրանալու վերաբերեալ միւս երկուսին հակառակ է եղեր¹ և միեւնոյն ժամանակ իր զարմանքը յայտնեց՝ որ պարոն Պարրոտը իսկապէս չի աւելացրել երիտասարդ հայ դպրի՝ Խաչատուր Աբովեանի վկայութիւնը, որ ձեռնարկութեան ժամանակ նշնպէս նրան ընկերակցել էր և որի հաստատութիւնը այս դէպքում ամենամեծ կշիռը կունենար։ Այս պատճառաւ տողերիս գրողը զիտեց իբրեւ շատ յաջող առիթ, վերջնականապէս հաստատելու համար այս կասկածի ենթարկուած ձեռնարկութեան հաւաստիութիւնը, որ հայ գիտնականը, որի վկայութեան պակասութիւնը ոչ առանց իրաւունքի նկատուիմ է այն քննիչը, հէնց այս վայրկեանում Պետերբուրգում է գտնուում և տեղեկատուի ամենաթեթեւ հրաւերքին հետևեց, որպէս զի իսկոյն իր բացատրութեամբ իր յարգանքը և շնորհակալութիւնը այն մարդուն յայտնէր, որ այնպէս հայրապէս նրան ընդունել էր, և այնքան մեծ խնամք էր տարել նրա գիտնական կրթութեան վրայ²։

Այսպիսով առաջ եկաւ հետագայ յօդուածը, որին մենք այս փոքրիկ յառաջաբանը յարակցեցինք և բացի սյդ. աւելացնում ենք նաև իբրեւ հաստատութիւն որ մենք անվտիտիս հրատարակում ենք նրան, ինչպէս ինքը պ. Խաչատուր Աբովեանը անձամբ և այն էլ Գերմաներէն լեզուով, որ իրաւամբ մի հայի վերաբերեալ շատ զարմանալի երևոյթ է, գրել է և որ պ. քաղաքական խորհրդատու Պարրոտը Գորպատում այս քայլի մասին ամենա-

1. Ծանօթ. Այս ընդգիմախօսութեան բացատրութիւնը, ինչպէս Աբովեանը իր հետևեալ շարադրութեան մէջ յայտնում է, նրանում պէտք է որոնել, որ առաջի երկու վկաները հայեր են, միւս երկուսը ռուսներ։

2. Ծանօթ. Յայտնի է որ պ. Պարրոտը հոգացել էր տէրութեան ծախքով այդ երիտասարդին Գորպատ հրաւիրել և նորին Մեծութեան Կայսեր շնորհքը դէպի նա է դարձրել այնպէս որ պ. Աբովեանին կարելի եղաւ 4 տարի այնտեղի համալսարանում մնալ և պատրաստուել լուծելու այն գեղեցիկ խնդիրը, որը նա աչքի առաջ ունի, այն է՝ իր մանուկ հայրենակիցների ուսուցիչ և կրթիչ դառնալ և որոց մօտ նա այժմ պատրաստ է գնալս։

փոքր տեղեկութիւն անգամ չունի, որին մենք, առանց մի որ և իցէ կոտմից դրդուած լինելու, մեզ պարտաւոր ենք համարում ցուցնել արժանի յարգանքը և մանաւանդ ճշմարտութիւնը երեւան հանել:

Եթէ իմ հայրենակիցները սնտոխապաշտութիւնից և նախապաշարումից դրդուած չկամեցան հաւատալ, որ պ. քաղաքական խորհրդական Պարրոտը Արարատի ամենաբարձր գազաթն է բարձրացել, այդ ես վերագրեցի նրանց այդպիսի մի ձեռնարկութեան կարելի լինելու մասին ունեցած պարզամիտ հասկացողութեանը և այն աւանդութեան որ խոր արմատներ է գցել նրանց սրտերում, ինչ որ նրանք պատմում են սուրբ նախահայր Յակոբի մասին: Առասպելը յայտնի է ըստ որում այդ սուրբը չնայած իր բոլոր ձգտման և սրբազան ջանքին Նոյի տապանը տեսնել ուրիշ ոչինչ չտաքաւ բայի տապանի մի կոոր փայտից¹ և Աստուածանից ուղարկուած հրեշտակը յայտնապէս յայտնեց նրան, թէ Աստուածանից արգելուած է մի որ և է մահկանացուի այդ սուրբ տեղերը ոտով կոխելու, այլապէս նա կենթարկուի աստուածային բարկութեան: Ուրեմն եթէ իմ հայրենակիցները այնքան յարգանք են ցոյց տալիս դէպի իրանց վեհ լեառը, որի վրայ Աստուած մի ժամանակ զարմանալի կերպով մարդկային ցեղը ազատեց և նրան դիտում են, իբրեւ մի սրբութիւն և պաշտում են, դրանում ի բոլոր սրտէ միանում եմ նրանց կարծիքի հետ: Սրանք պէտք է իրենց այդ ունեցածով հպարտ լինեն, որի նմանը ոչ մի ուրիշ երկիր չունի, և թող հանգստանան իմանալով, որ մենք ոչ թէ այն հողի վրայ ենք կանգնել, ուր տապանն էր կանգնած, այլ այն հաստ ձեան շերտի վրայ, որ անկասկած 100 ոտից աւել է և ծածկում է այդ սուրբ գետինը:

Բայց որ մի կրթուած Եւրոպացի կարող էր բարձրանալու ճշմարտութեան մասին կատկածել, ինչ համար խիստ անբացատ-

1. Ծանօթ. Այդ կոոր փայտը միացած մի շղթայով Նոյն սրբի մասին, ինչպէս նաև նրա ամբողջ կուռը արմուկից սկսած և ոսկով ծածկուած կարելի է մինչև այսօր տեսնել կաթողիկոսական ս. Էջմիածնի Վանքում ինչպէս ամենայարգելի սրբութիւններից մէկը:

րելի է: Սակայն զժբազդաբար յայտնուեց, որ նոյն իսկ զարգացած Եւրոպայում գտնուում են անձինք, որոնք դեռ աւելի ևս սնոտիապաշտ սահմանափակ նախակազմեալ կարծիքաւոր են երևում քան այն բնութեան պարզ մարդիկը:

Որովհետեւ այս վերջինների մէջ էլ կային անձինք որ մեզ երջանիկ էին համարում, անհասելին հասած և այնպիսի մեծ պատուի արժանացած լինելուն համար: Որինակի համար յիշում եմ սուրբ Յակովբի ծեր և բարեպաշտ վանահայր Կարապետին, որը չնայած ոչ գիտութիւն ունէր ոչ էլ մի առանձին աշխարհափորձութիւն, այլ միայն շնորհիւ իւր ուղիղ մտածողութեան և բարեպաշտ կեանքի, միանգամայն գրաւեց մեր բոլորիս սրտերը: Մասամբ նրա հանգիստ և աղմկից հեռու կեանքը, նրա մարդասէր յարգանքը դէպի մեղնից իւրաքանչիւրն և մասամբ մեր Եւրոպացի ճանապարհորդների գիտնական ձգտումը պատճառ էին եղել նրան համոզելու ու ինչպէս որ ինքն ինձ ծածուկ մի քանի անգամ նախագուշակեց. «ոչ անհնար է նրանց անկարելիութիւն հանդիպի, նրանք իսկական հրեշտակներ են, այդ տեսակ Աստուծոց երկնչող մարդկանց համար բարին միշտ կը կատարուի, և վերջն յայտնապէս յայտնում էր իւր այդ կարծիքը երբ մենք արդեն լեռն էինք բարձրացել:

Նաև երբ ես սառցի մի կտորը, որը ես լեռան գագաթից հետո էի վերցրել, որովհետեւ այնտեղ ուրիշ բան չգտայ, մի շշի մէջ արդէն հալուած դրութեամբ մեր ս. Եջմիածնի վանքը բերած խելացի և բարեպաշտ եպիսկոպոսներից և վարդապետներից մի քանիսը վերցնելով մասամբ երեսները շրջեցին. մասամբ իբրև սրբութիւն պահպանեցին: Ես ևս թէ և այնտեղ էի ծնուած և այդ տեսակ ձեռնարկութեանց մասին ոչ մի գաղափար չունէի, մի րոպէ անգամ չը կասկածեցի այդ վեհ գործի գլուխ գալու մասին, երբ դեռ ճանապարհորդները մեր վանքում էին, այլ իմ բոլոր բաղտը նուիրեցի միայն թէ կարողանայի ձեռնարկութեան մասնակցել: Առանց իմանալու, թէ գիտնական Եւրոպան դրան ինչ արժէք կտայ, Ասիայի խորքում ամենաերջանիկ մարդն էի որովհետեւ գտնուեցի իմ նախնիքների վայրում:

Բայց եթէ կամենայի պատմել թէ ինչ տեսակ վիրաւորանքներ կրեցի ես իմ ճշմարտութեան համար, ոչ միայն հայերից այլ նա և ուրիշներից, այն ժամանակ չը պէտքէ զարմանալ, որ իմ երկրի ժողովուրդը Անգրիկովկասում այդ պատճառով ինձ հետ թըշնամացել և ինձ սպառնացել է և այն երկու գիւղացիները, որ մեզ հետ միասին վերելում էին, դեռ մեր այնտեղ Արարատի ստորոտում եղած ժամանակ, այն աստիճան իրանց հարեաններից և գիւլի ծերերից չարչարուեցին և ծաղրի ենթարկուեցին, որ նրանք յաճախ մօտս եկան սրտանց յայտնելով, որ եթէ մենք նրանց չօգնենք, նրանք ստիպուած կլինեն ճշմարտութիւնը բացարձակօրէն ուրանալ և այդպիսով հանգստութիւն ու ապահովութիւն ստանալ: Այստեղից պարզ նկատելի է ինչու համար այն երկու անձինք ստիպուած են եղել սխալ վկայութիւն տալու, այն անձինքը որոնց ես մեծ գոչարութեամբ, մասամբ աղաչելով, մասամբ սպառնալով, մի կերպ մեզ հետ վերեն էի տարել, որովհետեւ առաջին՝ գոչարութեամբ էին կրում նեղութիւնները և ապա երկրորդից չէին ցանկանում մեզ հետեւել:

Ուրեմն ես ասում եմ այստեղ Պետերբուրգում զրդրւած մաքուր զգացմամբ դէպի ճշմարտութիւնը, այո ես հաստատում եմ ամբողջ Եւրոպայի առաջ, որ ես ս. քաղաքային խորհրդական Պարրոտի հետ երրորդ փոփոխ ժամանակ Արարատի գագաթն բարձրացել եմ, որ ես ինքս իմ ձեռներով կանգնեցրել եմ մի փայտեայ խաչ գագաթի հիւսիսային մասում և սառած ձեան մէջ ամրացրել և թէ այդ ամենաբարձր գագաթն էր ապացուցանում եմ այսպէս. հեռուից լեռան նայած ես միշտ կարծել եմ որ նա պէտքէ երկու գագաթներ ունենայ: Բայց բարձրանալու ժամանակ, երբ մենք արդէն մի քանի ժամ շարունակ ձեան մէջ քայլել էինք և վերջապէս մի բուռականի ընդարձակ բարձրութիւն մեր առաջին տեսանք, բոլորս էլ կարծեցինք, որ նա ամենաբարձր գագաթն է: Մեր արիւշան աշխատանքը մեր ուրախութիւնը այդ տեսարանից համարեա անհետացաւ, երբ մենք նրա վրայից մի երկրորդը՝ նրա հետեւում մեր առաջ տեսանք,

Թէ մեր գիւղացիները և զինուորները ինչպիսի վատ տրամադրութեան մէջ ընկան, այդ մասին լռումեմ: Պ. քաղ. խորհ. Պարբոտը ցոյց տուեց այդ տեղ մեզ արտակարգ հաստատամտութեան և հոգւոյ ներկայութեան բարձր օրինակ, նրանից ոգևորուած մասամբ յուսահատուած ուղղեցինք մեր քայլերը դէպի այդ երկրորդ գագաթն: Ես պարզօրէն խոստովանումեմ, որ լաւ չեմ յիշում արդեօք երկու թէ երեք անգամ էինք ստիպուած այդ գովարութիւնը յաղթելու համար քայլել, մինչև որ մենք այնպիսի մի գագաթ հասանք, որտեղից միւս բոլորը թէ աջ և թէ ձախ արևելքից և արևմուտքից մեզնից ցած էին երևում: Որպէս զի մեր ձեռնարկութեան յաջողած լինելու մասին աւելի ևս համոզուենք, մինչդեռ Պ. ք. խ. Պարբոտը զբաղուած էր ծանրաչափի հետազօտութեամբ գագաթից ուղղուեցի ես դէպի ս. Յակովբի վանքը՝ մեր Սթեանը, որովհետև նա գտնւում էր համարեա ուղղակի տարածութեամբ ուղղահայեաց լերկ սև զառիվայրի ամենաներքին մասում այնպէս որ եթէ մէկը ներքևից դէպի վերև նայի հնար կունենայ գագաթն տեսնելու: Ես կատարեցի ցանկութիւնս, տեսայ վանքը և նրա շրջակայքը և նոյն իսկ լեռան երկու կողմերը, որոնք ամփոփում են վանքը և նրա հովիտը: Այս տեղ ես կանգնեցրի խաչը: Մի ձեռնարկութիւն որի յիշելը մինչև այժմ ևս ամբողջ մարմնիս սարսուռ է պատճառում, որովհետև այդ լեռնագաշտի վրայից ամենաթեթև սխալ քայլը կեանքովս կը վճարէի: Սրը հրաշալի էր, բայց արդէն երեկոյեան մօտ: Երեանը, Երասխը, Բայազէդը, Եփրատը, Սեանի լիճը, փոքր Արարատը և միւս բոլոր կամ ձիւնով ծածկուած կամ մերկ լեռները իրանց գոլորշիով լքցուած հովիտներով, որ մենք ոչ մի ուրիշ կէտից այնպէս միասին չէինք տեսել, այս հրաշալի նկարի զիւթական տեսարաններն էին. յետ դառնալիս գեղեցիկ կերպով օժանդակեց մեզ նոր երևացող հրաշալի լուսինը:

Թէ ինչու Հայաստանում ես էլ ինչպէս երկու ռուս զինուորները չկարողացայ այս ճշմարիտ պատմութիւնը երգումս՝ հաստատել, այն է պատճառն որ այն ժամանակ երբ Պ. ք. խ. Պարբոտը պահանջեց զինուորներին և հայ գիւղացիներին երգւեցնել

ես արդէն Դորպատումն էի: Բայց այն տեղ ես երգուեցի Լանդ-
Գերիխտքի տեղական դատաստանիտ (Land Gericht) առաջ:

Եւ որպէս զի ցոյց տամ թէ Պ. ք. խ. Պարրոտը մինչև որ
աստիճանի ուղղամիտ էր, կամենում եմ հետեւեալը պատմել:

Խօլերայի ժամանակն էր, Դորպատի բոլոր պատուաւոր բնակիչ-
ները կանգնում էին սահմանի վրայ որպէս զի ճանապարհորդներին
ցոյց տային թէ որտեղից նրանք պէտք է անցնէին:

Մի օր ես գնացի այցելելու նրան այնտեղ, ուր կանգնել էին պ.
Պարրոտ և Ստրուէ պրօֆէսորները և գտայ նրանց շախ խաղա-
լիս: Երբ ես տուն էի վերադառնում պ. ք. խ. Պարրոտը ինձ
ասաց, որ ինձ պէտք է Արարատը բարձրանալու մասին հարցա-
քննութեան ենթարկեն: Ես յիշեցի որ բարձրանալու ճիշտ թի-
ւըն այլ ևս այնպէս հաստատ չեմ յիշում և խնդրեցի նրանից
ուղիղ թւականը: Նրա պատասխանն էր. «Նա ինձ ոչինչ չի ասիլ,
ես պէտք է յայտնեմ ինչ որ ես գիտեմ և ոչ թէ ինչ որ ինձ
կասեն»: Բայց բարեբաղդաբար ես ս. Յակովբի վանքը գալով ամեն
բան նշանակել էի ինչ որ ես բարձրանալու ժամանակ նկատել էի:
Այնտեղ գտայ թիւն:

Թէ ինչու համար պ. ք. խ. Պարրոտը իւր ճանապարհորդու-
թեան նկարագրութեան մէջ իմ երգումն չի յիշում ես կարող
եմ միայն նրան վերագրել, որ նա գուցէ ինկատի առնելով իմ
յարաբերութիւնը դէպի իմ ազգը կամեցել է ինձ խնայել, որով-
հետեւ ես պիտի այնտեղ վերադառնամ, որպէս զի այնտեղ եւրո-
պական քաղաքակրթութիւնից օգտակար և յարմար գիտու-
թիւններ նրանց մէջ տարածեմ: Բայց որովհետեւ այժմ հարկա-
ւոր է ճշմարտութիւնը հրապարակօրէն խոստովանել ես ոչինչից
չեմ վախենում, Աստուած կօգնի ինձ իմ բարեպաշտ մտադրու-
թեան մէջ, թէև կարող եմ մեծ գիտարութիւնների հանդիպել:
Ես կարող էի դեռ մեր Արարատը բարձրանալը հաստատելու հա-
մար ուրիշ հանգամանքներ կցել իմ այս հաստատ վկայութեանը,
բայց ինչի համար: Պ. ք. խ. Պարրոտը արգէն մանրամասն նը-
կարագրել է ճանապարհորդութիւնը և թող իմ հաւատարիմ
վկայութիւնը ոչնչացնի այն անձանց կասկածը, որ թէ բերանա-

ցի և թէ գրաւոր կերպով ճշմարտութեան դէմ են խօսել։
Դեռ երկար չի տեւիլ որ գուցէ մի զարգացած Եւրոպացի այ-
ցելէ իմ սիրուն հայրենիքը որպէս զի զարմանքով դիտի նրա վե-
հափառ լեռները, նրա սիրասուն հովիտները, որոնց նմանը ամ-
բողջ աշխարհում պէտք է փնտռել և հիանայ ամենահին ժա-
մանակների մարգկային հրաշալի յիշատակարանների վրայ։ Այս
եռանդուն և ազնիւ անձին խնդրում եմ, այո՛ երգեցնում եմ
նրան չերկնչել դժուարութիւններից բարձրանալ մեր ս. լեառը և
այնտեղից դիտել իմ հրաշալի հայրենիքը։ Նա առատապէս կը-
վարձատրվի և ճշմարտութիւնը կ'իկայի ¹։

Հայոց եկեղեցւոյ դպիր՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ.

Ս. Պետերբուրգ.

Փետր. 7-ին 1835 թ.

(«St. Petersb. Zeitung», 1835, № 34.)

1. Ծանօթ. Վիեննայում պատահամա մեր ձեռքն ընկաւ այս յօդու-
ածը պարունակող թերթը և մենք հարկաւոր համարեցինք նրան թարգմա-
նել նրա մէջ Արովեանի մասին հետաքրքիր կենսագրական տեղեկու-
թիւններ գտնելով։